կամեցայ շուտով վերադառնալ մեր խուցը: Նաւաստին դարձեալ գնաց կղզու ափերի մօտ թափառելու:

Ասլանին չգտայ մեր իջեւանում. նա դեռ չէր վերադարձել վանահօր խուցից: Ի՞նչ կար, որ այդքան ուշացաւ նա: Ես չեմ կարծում, որ հայր սուրբը որեւիցէ բանով նրան հիւրասիրած լինէր: Մի ամբողջ ժամ եւս անցաւ, երբ նա եկաւ: Ի՞նչ էր խօսացել այնտեղ, կամ ինչո՞ւ այդքան ուշացաւ, այդ մասին նա ինձ ոչինչ չպատմեց, բայց ես նկատեցի, որ նա բաւական դժգոհ էր: Գլխարկը բարկութեամբ մի կողմ նետեց եւ պառկեց կապերտի կտորի վրայ, ինքն իրան խօսելով. «այդ ապուշներից ոչինչ չէ կարելի սպասել»...

Նա աչքերը խփեց եւ լուռ կացաւ: Ես կարծեցի, որ քնեց: Չկամենալով խանգարել նրան, դուրս եկայ խուցից, նստեցի պատի մօտ մի քարի վրայ եւ սկսեցի նայել դէպի ծովը: Այդ միջոցին ինձ մօտ եկաւ աբեղան, որին յանձնուած էր հոգ տանել մեր մասին: Նա դեռ երիտասարդ էր, եւ այդ հասակում նրա մազերը մեծ մասամբ սպիտակել էին:

— Դուք, երեւի, այդ ծովի շրջակայքիցն էք, — հարցրի նրանից:

-Ոչ, հեռոից եմ, շատ հեռոից, — պատասխանեց նա մի առանձին տխրութեամբ:

— Որտեղի՞ց:

— Հին Նախիջեւանի կողմերից:

— Ձեր ծնողներից նամակ ստանո՞ւմ էք:

— Իմ ծնողները չգիտեն, որ ես այստեղ եմ:

— Ինչպէ՞ս չգիտեն:

— Ես ծածուկ փախայ մեր տանից, որ ծնողներս չարգելեն:

— Ինչպէ՞ս ծագեց ձեր մէջ այդ միտքը:

-Մեր տան քահանան, երբ հօրս մօտ էր գալիս, շատ անգամ պատմում էր անապատների մասին, ճգնաւորների մասին, ես լսում էի եւ այնքան գրաւոեցայ, որ մտածեցի թողնել մեղաւոր աշխարհը եւ մտնել անապատը:

Ես իսկոյն մտաբերեցի իմ վարժապետ տէր Թոդիկին, նա եւս մի ժամանակ ինձ խելքից հանել էր, ճգնաւորների մասին զանազան հրաշքներ պատմելով:

— Դուք չէ՞ք մտածում մի անգամ գոնէ գնալ ձեր ծնողներին տեսնելու:

— Այդ անապատը մտնողը այլեւս իրաւունք չունի դուրս գալու կղզուց. այստեղ մնում է, ծերանում է եւ այստեղ էլ մեռնում է...